նելով Զիկունետի այդեստանները։ Այստեղ Մաճիխել վտակն ընդունում է աջից՝ Կոբալետի, ձախից՝ Զխուրտունետի, Սկուրդիտի եւ Զանիվսա առուակները, ուղղւում է արեւմուտք ձախից ընդունելով նոյնպէս Կեդկեդի եւ աջից՝ Սիդիիտի եւ Գվարա առուակները ու խառնւում է Ճորոխին։

Ինչ դեր որ խաղացել է Արդվինը Ճորոխի միջին մասի — Ցրիա, Իշխալբուր, Մելօ, Մուտղուլ, Դեվիս եւ սրանց շրջանի մասին իր արհեստանոցներով մինչեւ 1870 թուականները, նոյնադործութեամբ. նոյն դերը կատարել է Մաճիխել աւանը իր եւ Աչարա վտակների, Իշղալայի, Փէհլէվանի վերաբերութեամբ։ Երբ 1773ի Գարասուի պարտութեան դոյժը հասաւ Մաճիխել, Լազերը Բէյերի թելադրութեամբ մտան Մաճիխել աւանը, քաշեցին տարան հարս, աղջիկ, պատանի եւ տղայ. վաճառքի դրին ծովափում, կոտորեցին դիմադրողներին, կործանեցին Մաճիխելը, որոնցից ճարպիկները անտառների միջով ցրուեցան ու հասան Արդվին, Արդանուչ, Օքրոբաշէտ, Տանձոտ եւ Օլթի, ապաստանեցին հայերի-տեղացիների մօտ մինչեւ 1918։ Գաղթական Մաճիխելցիների սերունդը յայտնի էր այդ շրջանում։

Ինչպէս որ հարուստ են վանքերով, ամրոցներով, բերդերով եւ դղեակներով Շաւշէտը, Արդանուչը եւ Իմերխեւը. այնպէս էլ